ԵՐԵՎԱՆԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Երևանի նահանգում և նրա կենտրոն Երևան քաղաքում սկիզբ դրվեց քաղաքական մի գործընթացի, որն առանձին փուլերով շարունակվեց մինչև 1918 թվականի հունիսը: Երևանը հանդես եկավ որպես հայության ինքնության, ազգային համախմբվածության կիզակետ, և աստիճանաբար վերածվեց Անդրկովկասի հայկական քաղաքականության կենտրոնի:

Չնայած նահանգային կոմիսարությանը՝ դեռ 1917 թ. հետփետրվարյան փուլին բնորոշ պարտաճանաչ և «հնազանդ» գործունեությանը, 1918 թ. հունվարի վերջին արձանագրվեց, որ «Երևանը խուսափում է կոմիսարիատից»[1]: Դա առաջին հայացքից կարող է ընկալվել որպես գավառային քաղաքականության ազգային դրսևորումներից մեկը, որ հետևողականորեն իրականացնում էր ինքնուրույն և ազգանպաստ քաղաքական գիծ: Կարևորն այն է, որ ամենակուլ, բեկումային իրադարձությունների հորձանուտում, Երևանում համախմբված գործիչները հնարավորինս փորձում էին պահպանել ազգային-քաղաքական դեմքը, ինչի շնորհիվ նաև՝ տարածաշրջանի ռազմաքաղաքական վայրիվերումների մեջ հասան արդյունքի: Երկրամասային զարգացումների ամբողջության մեջ Երևանը միանգամայն ինքնուրույն էր, և ներկայացնում էր ազգային հանգրվանի գիտակցությամբ ու կամքով օժտված մի բռունցք:

1917 թ. հոկտեմբերի 29-ին (նոյեմբերի 11) Երևանի բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդը, քննարկելով Պետրոգրադի դեպքերը, ընդունեց աջ էսէռների՝ հեղաշրջումը դատապարտող բանաձևը: Նոյեմբերի 19-ին (դեկտեմբերի 2) Երևանի նահանգային կոմիսար Ս. Խաչատրյանը Օզակոմին հեռագրում էր, որ նոյեմբերի 14-ին և 15-ին «բոլշևիկները փորձեցին ելույթ ունենալ, բայց ձախողվեց, դրությունը մնում է անհուսալի»[2]: Դա արտահայտվում էր նաև նրանով, որ նոյեմբերի 19-ին միայն, երկար ընդմիջումից հետո, քաղաքում ստացվեցին Պետրոգրադի թերթերը, հաջորդ օրը Երևանի ծառայողները չստացան աշխատավարձ՝ «փողի կատարյալ բացակայության պատճառով»[3]: Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծման հաջորդ օրը՝ նոյեմբերի 16-ին, Երևանում կայանում է նահանգային գործադիր կոմիտեի նիստը: Այստեղ վերջնականապես ձևավորվում է նախագահությունը՝ նախագահ Սմբատ Խաչատրյան, ան-

---

[1] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 30, I մաս, թ. 46:*

[2] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 895, թ. 1:*

[3] *Տե՛ս «Զանգ» (Երևան), 19. XI. 1917:*

դամներ՝ Սահակ Թորոսյան, տեղակալ՝ Մեյիդով, Երմոլաև, քարտուղար՝ Ս. Թորոսյան[4]: Քննարկելով կոմիսարիատի հանդեպ վերաբերմունքի հարցը, նահանգային գործադիր կոմիտեն միաձայն որոշում է շնորհավորել Անդրկովկասի նոր իշխանությանը և վերջինիս ձևավորման սկզբունքների հիման վրա վերակառուցել նաև նահանգային իշխանությունը[5]: Նոյեմբերի 18-ին (դեկտեմբերի 1) Երևանում բացվեց քաղաքային դումայի 8-րդ նիստը: Ձայնատու Հովհ. Մելիքյանը և մյուսները նկատում են «հեղափոխական ձայնատուների» ոչ բարեխիղճ վերաբերմունքը:

Նահանգի և քաղաքի առաջնային կենսական խնդիրը առայժմ մնում էր առաջին անհրաժեշտության մթերքների, հատկապես, հացի ապահովման հարցը: Նոյեմբերի 9-ին (22) Երևանում կայանում է նահանգային պարենային վարչության նիստը՝ նահանգային կոմիսար Ս. Խաչատրյանի նախագահությամբ, Երևանի քաղաքագլուխ Թ. Տոշյանցի և քաղաքային ու պարենային վարչության անդամների մասնակցությամբ: Այստեղ, հիմնականում, քննարկվում է նոյեմբերի 7-ին (20) նահանգային պարենային վարչության նախագահ Մակինսկիից և վարիչ Ն. Սիրինից ստացված զեկուցագիրը՝ նահանգի պարենային իրավիճակի մասին[6]: Ն. Սիրինը գտնում էր, որ իրադրությունն օրհասական է. եղած 5 ½ վագոն ցորենը բավարար էր Երևանը չորս օր կերակրելու համար[7]: Իրավիճակն ավելի էր բարդանում նրանով, որ միայն Երևանի նահանգում արևմտահայ գաղթականների թիվը կազմում էր 124.329 մարդ[8]:

Փետրվարի 20-ին, Կովկասում Հայկական բարեգործական ընկերության (ԿՀԲԸ) Կովկասյան ռազմաճակատի հայ փախստականներին պարենի մատակարարման բաժինը, ՆԳՆ գծով կոմիսարին հայտնում էր, որ Երևան է ուղարկել 6 վագոն ցորեն, որոնցից մեկը յուրացվել էր Պարենային կոմիտեի կողմից, իսկ մյուս հինգը Թիֆլիսից անհայտ պատճառներով չեն հասել Երևան: Փախստականների միջավայրում հասունանում էր դժգոհության ալիքը, դրանք սպառնում էին վերածվել էքսցեսների: Առավել անհանդուրժողականություն էր դրսևորում Վանի գաղթականությունը: Նրանք, Բարեգործականի լիազորներ Դ. Արամյանցի և Կ. Առաքելովի վկայությամբ, ամեն օր, նույնիսկ փողոցում կանգնեցնում էին իրենց և պահանջում ԿՀԲԸ պարտքը՝ սպառնալով դատաստան տեսնել: «Աստված սիրեք,– խնդրում էին լիազորները,– ազատեք մեզ այդ կատաղած ամբոխից: Եթե մինչև նրանց նշանակած ժամկետը՝ փետրվարի 22-ը, խնդիրը չհարթվի, մեզ դժբախտություն է սպասվում: Խնդրում ենք արտակարգ կարգադրություններ»[9]: Մարտի 18-ին, Արևմտահայերի ազգային խորհրդի Երևանի շրջանային մարմինը նահանգային կոմիսար Ս. Թորոսյանին հայտնում էր, որ

---

[4] *Տե՛ս նույն տեղում:*

[5] *Տե՛ս* Молот (Тифлис), 21. XI. 1917.

[6] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 220, ց. 1, գ. 73, թ. 48-52:*

[7] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 77, թ. 65:*

[8] *Տե՛ս նույն տեղում, թ. 66:*

[9] *Տե՛ս նույն տեղում, գ. 111, թթ. 33, 34:*

ԿՀԲ ընկերության Աշտարակի գաղթականական պահեստը փակվում է, ուստի և խնդրում էին շաքար բաց թողնել[10]:

Խորացող անարխիայի, անիշխանության երևույթների պատճառով Անդրկովկասյան Կոմիսարիատը, հետո էլ Մեյմը փորձում էին նկատելիորեն բարձրացնել միլիցիայի ջոկատների դերակատարությունը, ինչը ուղղակիորեն անդրադառնում էր հայկական շրջանների, այդ թվում և Երևանի նահանգի վրա: 1917 թ. դեկտեմբերի 21-ին (1918 թ. հունվարի 3) Երևանի նահանգային կոմիսարիատի նախագահ Ս. Խաչատրյանը նահանգի միլիցիայի տեսուչից պահանջում էր ներկայացնել միլիցիայի իրավիճակը[11]: Դեկտեմբերի 28-ին (1918 թ. հունվարի 10) նա զեմստվային միլիցիայի տեսուչից տեղեկություններ էր պահանջում իր իրավասության ներքո տեղամասում առկա «Բերդանա» հրացանների քանակի մասին[12]: Դեկտեմբերի 23-ին (1918 թ. հունվարի 5) ՆԳՆ գործերով կոմիսար Ա. Չիենկելին նահանգային կոմիսարին հայտնում էր, որ Շարուր-Դարալագյազի գավառում տեղի միլիցիայի կառույցը չի ձևավորված, և առաջարկում էր ներկայացնել տեղի միլիցիայի պետի թեկնածություն: Ա. Չիենկելին պահանջում էր նաև, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն սահմանի պաշտպանության ուղղությամբ, ինչը պետք է իրականացներ «թաթարներից, հայերից ու քրդերից ձևավորված հասարակական անվտանգության կոմիտեն»[13]: 1918 թ. փետրվարի 18-ին, թուրքական արշավանքի պայմաններում նա երկրամասի վարչական բոլոր կառույցներին շրջաբերական է ուղարկում, որտեղ տագնապ էր հայտնվում միլիցիոներներից ձիեր գողանալու մասին[14]: Մարտի 18-ին (31), նորանշանակ ՆԳ - նախարար Ն. Ռամիշվիլին Երևանի նահանգային կոմիսարին տեղեկացնում է, որ ըստ Կոմիսարիատի մարտի 9-ի (22) որոշման, մեկ ամսով երկարացվում է միլիցիայի զորակոչի տարկետումը[15]: Եվ վերջապես, 1918 թ. ապրիլի 13-ին (26) Երևանի նահանգը տեղեկացվում էր Մեյմի ընդունած օրենքի մասին, ըստ որի ցրվում էր միլիցիայի պահեստազորը և ելնելով ռազմական դրությունից, այն վեց ամսով, ժամանակավորապես, վերակազմավորվում էր հատուկ հեծյալ ջոկատների[16]:

Դեկտեմբերի 7-ին (19) Երևանում իր աշխատանքներն էր սկսել նահանգի հողային կոմիտեների համագումարը. նիստը բացել էր Երևանի նահանգային հողային կոմիտեի նախագահ Լ. Մուշեղյանը[17]:

1918 թ. հունվարի 16-ի (29) պաշտոնական մի գրությունից պարզվում է, որ Երևանի նահանգային գործադիր կոմիտեի նախագահ էր ընտրվել դաշնակցական Սահակ Թորոսյանը[18]: Ստանձնելով նահանգային իշխանությունը և

---

[10] *Տե՛ս նույն տեղում, թ. 22:*
[11] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 73, թ. 1 շրջ.:*
[12] *Տե՛ս նույն տեղում, գ. 289, թ. 1:*
[13] *Տե՛ս նույն տեղում:*
[14] *Տե՛ս նույն տեղում, թ. 7:*
[15] *Տե՛ս նույն տեղում, թ. 8:*
[16] *Տե՛ս նույն տեղում, թ. 15:*
[17] *Տե՛ս «Հորիզոն» (Թիֆլիս), 21. XI. 1917:*
[18] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 114, թ. 11:*

նկատի առնելով, որ Օզակոմի 1917 թ. հոկտեմբերի 7-ի կառավարման սկզբունքները հակասում էին ժողովրդավարության սկզբունքներին՝ նա խնդրում էր թույլ տալ իրեն կազմակերպել նահանգի տեղական գործադիր նոր իշխանություն, հաշվի առնելով նահանգի իրական քաղաքական ուժերը և առաջնորդվել Հանրային ապահովության (հասարակական անվտանգության) խորհրդի կողմից նոյեմբերի 10-ին Թիֆլիսում ընդունված հիմունքներով[19]: Ի դեպ, 1917 թ. ամռանը Ս. Թորոսյանը զբաղեցնում էր Երևանի նահանգային կոմիսարիատի ներքին գործերի բաժնի վարիչի պաշտոնը: Տեղի միլիցիայի տեսուչին հասցեագրված գրությունը, որը ճշտում էր ամսական ծախսերի գումարը (218.150 ռուբ.), մեզ համար կարևորվում է նրանով, որ հստակ գծագրվում էր նահանգի վարչական կառուցվածքը: Ուշագրավ է նաև այն, որ փաստաթղթում Երևանի նահանգը հիշատակվում էր որպես «երկիր»՝ «երկրի վարչական բաժանումը» խորագրով[20]:

Նահանգն ուներ հետևյալ վարչական կառուցվածքը. 1) Երևանի գավառ – ք. Երևան, ա) Կըրխ-Բուլաղի տեղամաս (Քանաքեռ ավան), բ) Գառնիի տեղամաս – (գ. Բաշ-Գառնի), գ) Ախտայի տեղամաս (գ. Ներքին Ախտա), 2) Էջմիածնի գավառ – գ. Վաղարշապատ, ա) Վաղարշապատի տեղամաս (գ. Վաղարշապատ), բ) Աշտարակի տեղամաս (գ. Աշտարակ), գ) Ապարանի տեղամաս (գ. Ալի Քուչակ), դ) Հաջի-Խալիլի տեղամաս (գ. Հաջի-Խալիլ), 3) Նոր-Բայազետի գավառ – ք. Նոր - Բայազետ, ա) Նոր-Բայազետի տեղամաս (ք. Նոր-Բայազետ), բ) Ղարանլուխի տեղամաս (գ. Ներքին Ղարանլուխ), գ) Բասար-Գեչարի տեղամաս (գ. Բասար-Գեչար), 4) Դարալագյազի գավառ-գ. Քեշիշ-Քենդ, ա) Քեշիշ-Քենդի տեղամաս (գ. Քեշիշ-Քենդ), 5) Դիլիջանի գավառ – գ. Դիլիջան, ա) Ղարաքիլիսայի տեղամաս (գ. Մեծ Ղարաքիլիսա), բ) Դիլիջանի տեղամաս (գ. Դիլիջան), գ) Քարավանսարայի տեղամաս (գ. Քարավանսարայ)[21]:

Երևանի նահանգի քաղաքացիական իշխանությունն իրականացվում էր չորս գլխավոր կառույցների միջոցով, որոնք Փետրվարյան հեղափոխության անմիջական հետևանք էին: Դրանք էին՝ Երևանի նահանգի գործադիր կոմիտեն, Դուման՝ որպես գործադիր մարմին, և նրան կից քաղաքային վարչությունը, բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդը և Երևանի քաղաքագլուխը:

Նահանգային գործադիր կոմիտեի նախագահության նախագահի պաշտոնը 1917 թ. մարտից զբաղեցնում էր ՀՀԴ անդամ Սմբատ Խաչատրյանը, որին որպես նախագահ կամ նահանգային կոմիսար 1918 թ. հունվարի 16-ից (29) փոխարինում է դաշնակցական Սահակ Թորոսյանը[22]: Երևանի Դումայի նախագահն էր դաշնակցական Մարտիրոս Հարությունյանը, քաղաքագլուխը՝ սոցիալիստ-հեղափոխական Թադևոս Տոշյանցը, պարետը՝ Արշավիր Շահխաթունին:

---

[19] *Տե՛ս «Հորիզոն», 17. XI. 1917:*

[20] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 73, թ. 17:*

[21] *Տե՛ս նույն տեղում:*

[22] *Ս. Գ ա լ ս տ յ ա ն, Ս. Թ ո ր ո ս յ ա ն. Հայաստանի առաջին հանրապետության Երևանի նահանգապետը, Երևան, 2007:*

Որպես ազգային կառույցներ, առայժմ հանդես էին գալիս Արևմտահայերի ազգային խորհրդի Երևանի շրջանային մարմինը և նոր ձևավորվող Երևանի ազգային խորհուրդը:

Երևանի քաղաքային Դուման 1918 թ. հունվարին ներկայացված էր հետևյալ քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների անդամությամբ՝ սոցիալիստ-հեղափոխականներ, սոցիալ-դեմոկրատներ, Հայ հեղափոխական դաշնակցություն, Հայ ժողովրդական կուսակցություն, մահմեդական բնակչությունը ներկայացված էր «Մահմեդական մտավորականության և մահմեդական բանվորների միության», «Իրշադ», «Իթթիհադ», «Ֆեդերալիստներ», «Ազգային կոմիտե», մահմեդական սոցիալիստական «Մուդաֆիե Մազլումաև» կուսակցությունների և կազմակերպությունների տեսքով[23]: Նահանգը ներկայացնող քաղաքական ներկայացուցչական մարմնի կազմում էին գործում մոտալուտ մահմեդական խառվությունների մասնակիցներ, որոնց համագործակցությունը թուրքական արշավանքի պայմաններում վերածվում է բացահայտ թշնամանքի:

Երևանի քաղաքային դումայի 60 ձայնատուների կազմում էին Կոնստանտին Ստարցևը, Պողոս Մակինցյանը, Դավիթ Զուբյանը, Թադիանոս Թադիանոսյանը, Աննա Նազարյանը, Գառնիկ Գյուզալյանը, Ելենա Պապազյանցը, Արմենակ Մելիքյանը, Տիգրան Ռաշմաջյանը, Խալիլ-բ. Կասումբեկովը, Հուսեյն Շահթախթինսկին, Մուստաֆա Թոփչիբաշևը և շատ ուրիշներ[24]:

Թուրքական արշավանքի նախօրեին, Երևանի քաղաքային իշխանությունների, տվյալ դեպքում քաղաքային վարչության և Դումայի աշխատանքային առօրյան վեր է հանվում մի շարք որոշումներում: Այսպես, 1918 թ. հունվարի 3-ին (16) Երևանի քաղաքային դուման լսում է քաղաքային վարչության զեկույցը՝ Երևանի պարետ, պոդպորուչիկ Ա. Շահխաթունիին քաղաքի պաշտպանության նպատակով հատուկ լիազորություններով օժտելու մասին: 22 ձայնատուներից՝ 15 կողմ և 7 դեմ հարաբերությամբ վարչության զեկույցը հաստատվումէ[25]: Յոթ մահմեդականների վճռական դիմադրությունն այս հարցում արտացոլում էր Երևանի նահանգում տիրող ազգամիջյան բախումների և մոտալուտ մահմեդական խառվությունների ահագնացումը:

Հունվարի 16-ին (29) Քաղաքային վարչությունը Դումային է ներկայացնում «Քաղաքների համառուսաստանյան և Կովկասյան միության» կազմում Երևանի ընդունման մասին զեկույցը: Շեշտվում էր այն կարևոր հանգամանքը, որ մունիցիպալ ծրագրի իրականացման և տեխնիկական ու ֆինանսական մեծ միջոցների տնօրինման ուղղությամբ կատարվող աշխատանքները արդյունքի կհասնեն միմիայն ինքնավարությունների խոշոր միավորումների ճանապարհով: Այդպիսի հզոր կառույցներ էին դիտվում Համառուսաստանյան և Կովկասյան քաղաքների միությունները: 7-րդ Համառուսաստանյան և 6-րդ կովկասյան համագումարները արդեն մշակել էին քաղաքների կազմակերպման և համագործակցության վերաբերյալ կանոնադրությունները: Հաջորդ օրը Դումայի նիստն ընդունում

---

[23] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 495, թ. 2-3:*
[24] *Տե՛ս նույն տեղում, թ. 3:*
[25] *Տե՛ս նույն տեղում, թ. 11:*

է քաղաքային վարչության միջնորդությունը և որոշում է կայացվում Երևան քաղաքի անդամագրության մասին[26]: Նույն նիստում կայանում են մի շարք ընտրություններ, որոնք լույս են սփռում վարչության հանձնաժողովների և խմբերի կազմի վրա: Որպես այդպիսիք հանդես են եկել ֆինանսական, քաղաքային հիվանդանոցի կառուցման, գնահատման, կրթության, Երևանի «Կոնկայի» վերահսկողության, քաղաքի հողերի ոռոգման և այլ հանձնաժողովներ:

Մարտի 9-ին (22) Երևանի նահանգային գործադիր կոմիտեն ի դեմս նահանգային կոմիսար Ս. Թորոսյանի որոշում է, որ պարենային գործը նահանգում այսուհետև անցնում է գործադիր կոմիտեին, ըստ որի նահանգային պարենային կոմիտեն, նահանգային վարչությունը և կոմիտեին կից խորհուրդը համարվում են վերացված: Նահանգի պարենային գործն անմիջականորեն ղեկավարելու նպատակով, ընտրվում են երկու իրավահավասար կոմիսարներ՝ Զ. Բեկ-Մակինսկին և Օ. Տեր-Հարությունյանը[27]:

* * *

1917 թ. նոյեմբեր – 1918 թ. փետրվար ժամանակահատվածում Երևանի նահանգում ձևավորվում են և գործում ազգային մի շարք մարմիններ, այդ թվում՝ Երևանի նահանգի ազգային խորհուրդը, նրան կից՝ Ապահովության կամ Հատուկ կոմիտեն, Արևմտահայերի ազգային խորհուրդը, Հայ զինվորական միությունը (Երևանի զինվորական խորհրդի գործադիր կոմիտեն):

Ժամանակագրական առումով Հայ զինվորական միությունը ձևավորվել է առաջինը՝ նոյեմբերի վերջին: Բացի իր առջև կանգնած կենսական, անմիջական խնդիրների քննարկումից, այդ մարմինը Անդրկովկասի հայ իրականության մեջ առաջին ազգային կառույցն էր, որ անմիջապես արձագանքեց նաև երկրամասային իշխանության և զինադադարի հրատապ հարցերին: Ազգային զինվորական համագումար հրավիրելու գլխավոր դրդապատճառը, իհարկե, բոլշևիկյան հեղաշրջման հետևանքով Կովկասյան բանակի կազմալուծման գործընթացն էր, ազգային զորաբանակի ձևավորումը, ինչպես նաև անդրկովկասյան կառավարության ստեղծումը: Նոյեմբերի 11-ին (24) «Հորիզոնը» ծանուցում էր, որ նոյեմբերի 20-ին Երևանում բացվելու է «Հայ զինվորական համագումարը»[28]: Նախաձեռնությունը պատկանում էր Հայ զինվորական միության կենտրոնական կոմիտեին:

Համառոտ լուսաբանենք համազգային զինվորական այդ կառույցի նախապատմությունը: 1917 թ. ապրիլին Ժամանակավոր կառավարությունը հրապարակեց «Բանակի ազգայնացման հիմնական դրույթները» օրենքը[29]: Ռազմաճակատներում հաջողության հասնելու, ինչպես նաև հուլիսից հետո բոլշևիզմի դեմ վստահելի ռազմական հենարանի ձևավորման նպատակով անհրաժեշտ էր համարվում բանակի վերակազմավորումը, որի հիմքում դրվելու էր ազգային-տա-

---

[26] *Տե՛ս նույն տեղում, թ. 32, 34:*

[27] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 21, թ. 22:*

[28] *Տե՛ս «Հորիզոն», 11. XI. 1917:*

[29] *Այս մասին հանգամանորեն տե՛ս Վ. Հ. Մ ե լ ի ք յ ա ն. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997, էջ 276-287:*

րածքային միասնության սկզբունքը, այլ խոսքով՝ ազգայնացումը: 1917 թ. մայիսի վերջին կազմակերպվեց ռուսաստանյան բանակում ծառայող հայ զինվորականությունը: Պետրոգրադում կայացած ճակատային պատգամավորների համագումարի (մայիսի 12-17) մասնակից հայ սպաներն ու զինվորները իրենց ժողովում որոշեցին հիմնել համահայկական զինվորական կազմակերպություն: Մայիսի 22-ին, փոխգնդապետ Հ. Տիգրանյանի ու Ն. Մելիք-Փարսադանյանի և սոցիալիստ-հեղափոխական Պ. Լևոնյանի ջանքերով Պետրոգրադում ստեղծվեց Հայկական զինվորական հանձնաժողովը, որի նախագահ դարձավ Գերագույն շտաբի գեներալ-մայոր Լ. Տիգրանյանը: Հանձնաժողովի նպատակն էր համախմբել ռուսական բանակում եղած մոտ 120 հազար հայ զինվորներին, նրանց կենտրոնացնելով Կովկասյան ռազմաճակատում, կազմավորել հայկական բանակային կորպուս[30]: «Համահայկական ռազմական լիգայի կանոնադրությունը» առաջնահերթ էր համարում հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պաշտպանությունը, Ռուսաստանի և նրա դաշնակիցների հաղթանակին նպաստելը, պատերազմի ավարտից հետո Արևմտյան Հայաստանում հայկական պետականության վերականգնմանն աջակցելու գործը: Լիգայի խորհուրդը և Գլխավոր կոմիտեն պետք է աշխատեին Պետրոգրադում, իսկ երկու կենտրոնական կոմիտեները տեղակայվելու էին Թիֆլիսում, մյուսը՝ Լոնդոնում կամ Փարիզում[31]: Այդ նպատակով Լ. Տիգրանյանի կողմից կազմված զեկուցագիրը մայիսի 25-ին դրվեց Պետրոգրադի Հայկական կոմիտեի քննարկմանը և հավանության արժանացավ: Հայկական կոմիտեի նախագահ Ն. Ադոնցը և կոմիտեի անդամ Հ. Զավրիյանը մտան զինվորական հանձնաժողովի կազմի մեջ: Համատեղ նիստում ընտրվեց նաև մի պատգամավորություն, որը պետք է զեկուցագիր ներկայացներ ռազմածովային մինիստր Ա. Կերենսկիին[32]: Պատգամավորությունը, որին միացավ նաև կառավարության Կովկասյան գործերով կոմիսարի օգնական Գ. Եվանգուլյանը, մայիսի 31-ին Ա. Կերենսկիին հանձնեց նշված զեկուցագիրը, որը արժանացավ վերջինիս հավանությանը: Սակայն հունիսի 1-ին Նիկողայոս Ադոնցը հանձնաժողովի անդամների համար անսպասելի կերպով դրեց այդ կազմակերպության լուծարման հարցը: Հիմնավորումն այն էր, որ հանձնաժողովը կատարել է իր առջև դրված գլխավոր խնդիրը՝ զեկուցագրի մշակումը և Ա. Կերենսկիի կողմից հավանության ձեռք բերումը: Հակառակ Լ. Տիգրանյանի, Ն. Մելիք-Փարսադանյանի, Լ. Աթաբեկյանի և այլոց առարկություններին, Պետրոգրադի Հայկական զինվորական հանձնաժողովը լուծարվեց[33]:

Հայկական ազգային զինուժի կազմակերպման և նրա ղեկավար մարմինը դարձավ 1917 թ. մայիսի վերջին Թիֆլիսում ստեղծված Հայ զինվորական միությունը (ՀԶՄ)[34]: Ստ. Թոփչյանի վկայությամբ «այն կազմվել էր դրսի և տեղական հայկական զորամասերի ընտրյալներից, հայկական գնդերի ներկայացուցիչնե-

---

[30] *Տե՛ս* J. K a y a l o f f. The Battle of Sardarabad. Paris, 1973, p. 90.

[31] *Տե՛ս Ա. Ն ա զ ա ր յ ա ն. Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թվականներ), Երևան, 1999, էջ 98:*

[32] *Տե՛ս* J. K a y a l o f f. *Նշվ. աշխ., էջ 91-92:*

[33] *Տե՛ս նույն տեղում, էջ 92-93:*

[34] *Տե՛ս Վ. Հ. Մ ե լ ի ք յ ա ն. նշվ. աշխ., էջ 284:*

րից, հայ կամավորական խմբերի պետերից և Ազգային բյուրոյի ներկայացուցիչներից: Իր նախագիծ-կանոնադրության մեջ նա կոչ էր անում ամբողջ հայ զինվորականությանը միանալ՝ կազմակերպված պաշտպանելու հեղափոխությունն ու հայրենիքը: Նա գտնում էր, որ Կովկասյան ճակատի անհաջողությունն ու ճեղքումը ինքնստինքյան աննկարագրելի արհավիրքներով սպառնալու է մեզ»[35]: ՀՋՄ գործադիր մարմնի՝ կենտրոնական կոմիտեի կազմի մեջ մտան Ա. Շահմազյանը, Ռ. Տեր-Մինասյանը[36], կապիտան Ն. Աբազյանը, Լ. Փիրալյանը, Գ. Տեր-Օհանյանը, Մ. Պապաջանյանը, Տ. Բեկզադյանը, Հ. Բեկզադյանը, Տ. Անիյանը: ՀՋՄ կենտրոնական կոմիտեի նախագահ ընտրվեց Արսեն Շահմազյանը:

1917 թ. նոյեմբերի 20-ին (դեկտեմբերի 3) Երևանի քաղաքային Դումայի դահլիճում բացվեց Հայ զինվորական համագումարի խորհրդակցական նիստը: Այն բացեց Թիֆլիսի ՀՋՄ կենտրոնական կոմիտեի նախագահ, պորուչիկ Ա. Շահմազյանը: Այստեղ ներկա էին պատգամավորների մեծ մասը, Թիֆլիսի վարչության անդամները, ինչպես նաև Հայոց ազգային խորհրդի զինվորական բաժանմունքի անդամները: Եղան առաջարկներ համագումարի նախագահության թվի և կազմի վերաբերյալ, ձայների մեծամասնությամբ անցավ չորս համանախագահների և հինգ քարտուղարների առաջարկը [37]: Որոշվեց ողջույնի ճառեր արտասանելու համար ելույթներ թույլ տալ նաև հարևան ազգերի ներկայացուցիչներին, իսկ կուսակցություններին՝ արգելել:

Համագումար հրավիրելու գլխավոր մտահոգությունը կայանում էր նրանում, որպեսզի բոլշևիկյան հեղաշրջման և հոդի ու խաղաղության հռչակագրերի հետևանքով դասալքող և բոլշևիկացող Կովկասյան բանակի զորամասերին հակադրել ազգային զինուժի այլընտրանքը: «Ամբոխը հավատում է բոլշևիզմին,– - տագնապ էր հայտնում ՀՀԴ մարմնի «Զանգ» թերթը,– որի սնանկությունը այսօր չէ վաղը երևան կգա: Այն ժամանակ կը տիրե կատարյալ անիշխանությունը և անբարոյացումը: Ահա այս վայրկյանի համար հարկավոր է կազմակերպված մի կուռ բանակ, գիտակից և հայրենասեր: Մեր հայ զինվորությունը չի կարող տարվել նույն ճանապարհով, որով գնում է ռուս զինվորությունը: Մեր դիմաց կանգնած է տաճիկ կառավարությունը, որը ակնդետ սպասում է այն վայրկյանին, երբ կարող կլինի ոչնչացնել նաև Կովկասի հայությունը»[38]: Առանձնահատուկ կերպով ընդգծվում էր, որ ազգային բանակը պետք է զերծ մնա կուսակցականությունից:

Նոյեմբերի 21-ին (դեկտեմբերի 3) Երևանի քաղաքային ակումբի դահլիճում բացվեց Հայ զինվորական (զորականների) համառուսաստանյան առաջին համագումարը. ներկա էին պատգամավորներ հայկական բոլոր գնդերից, հայ զինվորական միության բոլոր մասնաճյուղերից և ռուսական բանակից: Վճռական

---

[35] *Տե՛ս «Հորիզոն», 19. XI. 1917:*

[36] *«Հորիզոն»-ի հոդվածի հեղինակ Ստեփան Թոփչյանը ԿԿ-ի նախագահ հիշատակում է Ռուբենին:*

[37] *Տե՛ս «Զանգ», 23.XI.1917:*

[38] *Տե՛ս նույն տեղում:*

ձայնի իրավունքով պատգամավորների թիվը հասնում էր 150-ի[39]: ՀՀ Դաշնակցությանն ընդդիմադիր ՀԺԿ-ը և «Մշակ» թերթը խորանալով մանրամասների մեջ, նշում էին, որ համագումարի պատգամավորների կազմը «բնորոշ է հայ զօրքին», այսինքն՝ ընդգծում էին վերջինիս ներկայացուցչական ոչ լիարժեքության հանգամանքը: Մինչև նոյեմբերի 22-ը Երևան եկած պատգամավորներից 15-ը զինվորներ էին, 68-ը՝ սպաներ, 8-ը՝ բժիշկներ: Հայկական 5-րդ գունդն ուներ 6, մնացածները՝ 10-ական պատգամավորներ: Ռուսաստանի նահանգներում և արևմտյան ճակատում տիրող ռազմաքաղաքական բարդ իրավիճակի պատճառով միայն մի քանի պատգամավորներ (12-րդ բանակից՝ 1, Թուրքեստանյան օկրուգից՝ 2) կարողացան ժամանել Երևան: Խորհրդակցական ձայնով ներկա էին հայկական գնդերի հրամանատարներ Մելիք-Մուրադյանը, Հովսեփյանը, Տիգրանյանը և ուրիշներ[40]: Հայոց ազգային խորհուրդը ներկայացնում էին Մ. Պապաջանյանը և Ռուբենը (Ռ. Տեր-Մինասյան)[41]: Համագումարը բացում է Ա. Շահմազյանը. նա ներկայացնում է ՀԶՄ անցած ուղին, ինչպես նաև հայտարարում, որ գերագույն հրամանատարության կողմից ստացվել է հայկական կորպուսի ստեղծման վերաբերյալ հրամանը, ինչն ընդունվում է բուռն ծափահարություններով: Այստեղից պարզվում է նաև, որ Հայկական բանակային կորպուսը ձևավորվել է ավելի վաղ, քան ընդունված է մեր պատմագրության կողմից, այսինքն՝ նոր տոմարով ոչ թե դեկտեմբերի 10–12-ի ընթացքում,այլ դեկտեմբերի 2-ին: «Զանգ» թերթի

նույն համարում պորուչիկ Լ. Փիրալյանը նշում էր, որ նոյեմբերի 19-ին (դեկտեմբերի 2) ռազմաճակատի շտաբը գեներալ Թովմաս Նազարբեկյանին նշանակել էր հայկական կորպուսի հրամանատար:

Համագումարում կարդացվում են բազմաթիվ ողջույնի հեռագրեր՝ ուղարկված Դ. Դոնսկոյի, Թ. Նազարբեկյանի, Անդրկովկասյան կառավարության հայ կոմիսարների, Թիֆլիսի երկրամասային կենտրոնի անունից՝ Հ. Բեկզադյանի ՀԶՄ մասնաճյուղերի (մասնավորապես Պետրովսկի ՀԶՄ կողմից), ՀԺԿ Երևանի մասնաճյուղի, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանի և Դումայի նախագահ Հ. Բուդաղյանի, ռազմաճակատի կոմիսարի օգնական Պ. Լևոնյանի (աշուղ Ջիվանիի որդին), Կարսի լեհ զինվորականության միության, Երևանի քաղաքագլուխ Թ. Տոշյանցի, Կովկասյան ռազմաճակատի ուկրաինական զինվորական ռադայի անունից[42]: Մեծ տպավորություն է գործում ուկրաինացիների ողջույնը: Կովկասում ուկրաինական գործերով կոմիսար Չալիյը «հարազատ Հայաստանին ցանկանալով ազատություն և երջանկություն», 1917 թ. նոյեմբերին հայ ժողովրդին ցանկանում էր «ազատ և միացյալ Հայաստան», որի իրականացման գլխավոր երաշխիք էր համարում հայկական բանակը[43]: Հիշարժան է, որ համագումարը հատուկ որոշում է կայացնում կուսակցություններին ձայն

---

[39] *«Մշակը» նշում է մոտ 120 պատգամավոր [տե՛ս Մշակ (Թիֆլիս), 28. XI. 1917], Ա. Նազարյանը՝ 121 (տե՛ս Ա. Ն ա զ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 153):*

[40] *Տե՛ս «Մշակ», 28. XI. 1917:*

[41] *Տե՛ս «Հորիզոն», 19. XI. 1917:*

[42] *Տե՛ս «Աշխատանք» (Երևան), 25. XI, 29. XI. 1917:*

[43] *Տե՛ս «Զանգ», 23. XI. 1917:*

չտալու վերաբերյալ: Ու թեև կուսակցություններն իրոք զրկվում են ձայնից, սակայն համագումարի առաջարկով ՀՀԴ կողմից ողջույնի ճառերով հանդես են գալիս Արամ Մանուկյանը և Արևմտահայ խորհրդի նախագահ Վահան Փափազյանը: Արամը պաշտոնապես հայտարարում է, որ հայ զինվորականության կազմակերպումով, Դաշնակցությունն իր զինվորական առաքելությունն ու ռազմական գործունեության բնագավառը հանձնում է զինվորական մարմնին և «նվիրում է իրան քաղաքական և երկրային գործունեության»[44]:

Առաջին հայացքից իմիջիայլոց արված հայտարարությունը գործեց մինչև 1918 թ. հունիսը: Հայկական զինվորական կառույցները կուսակցականությունից և ՀՀԴ ղեկավարությունից ձերբազատելու նպատակով, ՀՋՄ և համագումարի կողմից արված առաջարկը թեև համապատասխանում էր համագումարի սկզբունքներին, տեղավորվում էր ժողովրդավարության չափանիշների համատեքստում, սակայն ստացվում էր, որ ամենապատասխանատու, բեկումային փուլում, ազդեցիկ ազգային կուսակցությունը, պաշտոնապես իրեն հեռացնում էր հայ իրականության ամենակենսական խնդրից՝ ռազմաճակատի պաշտպանությունից: Արդեն դրսևորվում էր միացյալ անդրկովկասյան կառավարության քաղաքականության և, մասնավորապես, Թուրքիայի հետ զինադադարի գործընթացի ազդեցությունը: Դրվում էր նաև Թուրքիայի հետ բանակցելու մարտավարության միջոցով ազգային ռազմաքաղաքական հիմնահարցերի լուծման գերապատվության հիմքը՝ Էրզրումից – Սարդարապատ պարտությանը: Միաժամանակ, քանի որ ՀՀԴ կառույցները, ինչպես հայտնի է, անմասն չմնացին և հաճախ ղեկավարեցին երկրամասի հայկական շրջանների հետ առնչվող ռազմական գլխավոր իրադարձությունները, կարելի է եզրակացնել, որ Արամի հայտարարությունն այս պահին բխում էր համառուսաստանյան ժողովրդավարության ուղղվածությունից, Սահմանադիր ժողովի սպասելիքներից և ինչ-որ առումով անպայման հակադրվում էր նաև բոլշևիզմին, որի համար բանակը կուսակցության շարունակությունն էր պարզապես: Ասվածի ապացույցներից է նաև այն, որ համագումարում լրջագույն քննարկման առարկա է դառնում քաղաքական իրավիճակին նվիրված առանձին սեկցիա ունենալու խնդիրը:

Թեև Ռ. Տեր-Մինասյանը և հայ էսէռների ներկայացուցիչները առաջարկում են այդ հարցը թողնել Հայոց ազգային խորհրդին կամ էլ ընդհանրապես հանել օրակարգից, սակայն հայ զինվորականության համաժողովը ձայների մեծամասնությամբ հակադրվում է այդ «անիմաստ զգուշավորությանը»: Իսկ մտավախությունն այն էր, որ համագումարի բանաձևը կարող էր հակասել Ազգային խորհրդի այդպիսով նաև ՀՀԴ դիրքորոշմանը և դրանով բարդ իրավիճակ ստեղծել[45]: Երևանի բ.գ. պատգամավորների խորհրդի անունից ողջունում է էսէռ Երմոլաևը, ընդգծելով, որ «հեղափոխական հայ զորքը պետք է պաշտպանե ոչ միայն իր հարազատ երկիրը, այլ նրա հետ միասին նաև ամբողջ Ռուսաստանը ու նրա մանուկ ազատությունը» և հույս հայտնում, որ այս համագումարում ևս

[44] *«Մշակ», 23. XI. 1917:*
[45] *Տե՛ս նույն տեղում:*

պետք է հիմք դրվի ազգերի մեծ դաշնությանը[46]: Իրենց ելույթներով վերջինիս աջակցություն են հայտնում սպա Փիրումյանը, թաթարական-մահմեդական ազգային կոմիտեի երեք ներկայացուցիչներ, որոնց թուրքերեն պատասխանում է Դրոն: Համագումարի համանախագահներ հավասար իրավունքներով ընտրվում են չորս հոգի՝ Ա. Շահմազյանը, Հ. Բեկզադյանը, Գ. Տեր-Հովհաննիսյանը և Մ. Արզումանյանը, ինչպես նաև վեց քարտուղարներ[47]: Որոշվում է ունենալ երեք աշխատանքային սեկցիաներ. 1) ռազմաճակատի և թիկունքի պաշտպանության, 2) կազմակերպական, 3) տեղեկատվական:

Նոյեմբերի 22-ի (դեկտեմբերի 4) նիստում քաղաքական իրադրության վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ կովկասյան համաբանակային խորհրդի անդամ, բժիշկ Հ. Բեկզադյանը, որը բոլշևիկյան հեղաշրջումը որակեց որպես արկածախնդրություն և հանդես եկավ միատարր սոցիալիստական կառավարության ձևավորման օգտին՝ «ժողովրդական սոցիալիստներից մինչև բոլշևիկները»: Բանակի ազգայնացման և Հայկական կորպուսի ստեղծման օգտին խոսեց Մ. Պապաջանյանը, շեշտելով, որ զինադադարն անգամ չպետք է թուլացնի հայ զինվորի զգոնությունը, քանի որ վերջինս լիակատար հաշտության գրավական չէ տակավին[48]:

Կազմակերպական սեկցիայում երկու օր քննարկվում էր զինվորական կարգապահության հարցը: Անհրաժեշտ էր համարվում «հայկական գնդերում հայկական դիսցիպլինա մտցնել»: Զեկուցող գնդապետ Հ. Տիգրանյանի առաջարկը, որը նախատեսում էր ստեղծված իրավիճակում վերադառնալ ցարական մեթոդներին, այսինքն՝ վերադասին տրվեր ստորադասին անմիջապես՝ տեղում պատժելու իրավունք, աջակցություն ստացավ գնդապետ Հովսեփյանի, կապիտան Ն. Աբազյանի, Ռուբենի և այլոց կողմից. եղան և այդ խստագույն միջոցին դեմ արտահայտվողներ: Թիկունքի պաշտպանության սեկցիայում զեկուցում է Դրաստամատ Կանայանը, որը գլխավոր չարիքը համարելով դասալքությունը, առաջարկում էր կազակների օրինակով պատժիչ հեծյալ միլիցիայի խմբեր ձևավորել, իսկ դիմադրություն ցույց տվող և ավազակությամբ ու թալանով զբաղվող դասալիքներին գնդակահարել[49]:

Համագումարը փակվեց նոյեմբերի 25-ին (դեկտեմբերի 8) և ընդունեց մի շարք հրատապ որոշումներ[50]: Քաղաքական իրավիճակի մասին բանաձևն աջակցություն էր հայտնում Անդրկովկասյան կոմիսարիատին: Ռազմաճակատի պաշտպանության և հայկական զորամասերի վերաբերյալ որոշվեց, որ հաշտության բանակցությունները պետք է կառուցել Կովկասյան ռազմաճակատի եղած ներկա սահմանների շուրջ: Անհրաժեշտ էր համարվում արագացնել բանակի ազգայնացման գործընթացը, հայկական կորպուսների ձևավորումը, Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասի հայկական գավառներում ժողովրդական միլիցիայի ջոկատների ստեղծումը:

---

[46] *Տե՛ս «Զանգ», 23. XI. 1917:*
[47] *Տե՛ս «Մշակ», 28. XI. 1917:*
[48] *Տե՛ս «Մշակ», 29. XI. 1917:*
[49] *Տե՛ս նույն տեղում:*
[50] *Տե՛ս «Աշխատանք», 29. XI. 1917:*

Առանցքային հիմնահարցը Ռուսաստանի և Թուրքիայի միջև անջատ զինադադարի նկատմամբ դիրքորոշման կայացումն էր: Համագումարը որոշեց, «որ ազատ Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատիան, որ իր ձեռքն է վերցրել հաշտության գործը, հայ ժողովրդի մնացորդներին չի հանձնի միապետական Թուրքիայի հոշոտմանը և հաշտության պայմաններից մեկը պետք է լինի Արևմտյան Հայաստանի լիակատար ինքնորոշումը, նրա լիարժեք ազատագրումը թուրքական լծից: Մինչև հաշտության կնքումը Հայաստանը չպետք է դատարկվի մեր զորքերից, քանի որ գրավված մարզերի պարպումը կհանգեցնի մեր ժողովրդի մնացորդների բնաջնջմանը և վերջնականապես կթաղի նրա ազատագրման հարցը»:

Այս որոշումն ուղարկվում է անդրկովկասյան կոմիսարիատին և Կովկասյան բանակի երկրամասային խորհրդին: Ստորագրել էին համագումարի նախագահության անդամները՝ Ա. Շահմազյանը, Գաբրիել Տեր-Օհանյանը, Միքայել Արզումանյանը, Հովսեփ Բեկզադյանը, Թադևոս Պետրոսյանը, Մինաս Մակարյանը, Ավագ Հայրապետյանը, Գևորգ Ղահրամանյանը, Ստեփան Թոփչյանը, Ռուբեն Օհանջանյանը[51]:

Համագումարը հաստատեց միության կանոնադրությունը, փոխեց նրա կառուցվածքը: Այնուհետև ՀԶՄ-ն ունենալու էր խորհուրդ, որն իր հերթին ընտրում էր գործադիր մարմին: Խորհուրդը կազմված էր լինելու 50-60, իսկ գործադիր մարմինը՝ 15 անդամներից: Զինվորական խորհուրդը համարվում էր ժամանակավոր մարմին, հրավիրելու էր երեք ամիսը մեկ անգամ, այն փոխարինում էր նախկին զինվորական կենտրոնական մարմնին, մեկ տարվա ընթացքում գործելու էր Թիֆլիսում, իսկ վերջինիս անդամները ազատվելու էին զինվորական պարտականություններից[52]:

Համագումարից հետո, 1918 թ. հունվարին հայկական զինվորական կյանքի ղեկավարությունը ստանձնում է Հայ զինվորական խորհուրդը, որի գործադիր կոմիտեի կազմում բացի վերը նշված գործիչներից ներգրավվում են նաև Ա. Մանուկյանը, Դ. Կանայանը, Լ. Փիրալյանը (քարտուղար), Ն. Աբազյանը (գանձապահ), Հ. Տիգրանյանը, բժ. Ժամագործյանը, Ս. Փիրումյանը, շտաբային կապիտան Սարգսյանը և ուրիշներ[53]: Գործադիր կոմիտեն իր մասնաճյուղերին տեղեկացնում էր, որ նրանք այսուհետև կոչվեն ոչ թե Միության, այլ Հ.Զ. Խորհրդի ճյուղեր, և խուսափեն անջատ կոչեր հրապարակելուց: Միասնական ռազմական կառույցի աշխատանքները կազմակերպելու նպատակով ՀԶԽ Գործադիր մարմինը հիմնում է բաժանմունքներ. ա) շտաբի բաժնի նախագահ և գործադիր կոմիտեի գանձապահ՝ կապիտան Ն. Աբազյան, բ) թնդանոթային բաժնի նախագահ՝ փոխգնդապետ Հ. Տիգրանյան, գ) դասալիքների դեմ պայքարող բաժնի նախագահ՝ Արամ (օգնական՝ շտ. կապիտան Մելքումյան), դ) ռազմասանիտարական բաժնի նախագահ՝ Ժամագործյան, ե) ռազմա-տեխնիկական բաժանմունքի

---

[51] Центральный государственный исторический архив Грузии, ф. 2081, оп. 1, д. 227, лл. 26-27, *նաև՝ «Աշխատանք», 29. XI. 1917:*

[52] *Տե՛ս «Զանգ», 28. XI. 1917:*

[53] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 108, թ. 2:*

և դատական բաժնի նախագահ՝ պոդպորուչիկ Ս. Փիրումյան, զ) խմբագրական-կրթական բաժնի նախագահ՝ շտ. կապիտան Սարգսյան, է) տնտեսական բաժնի նախագահ՝ զինվոր Գ. Ղահրամանյան, ը) կամավորների հավաքման բաժնի նախագահ՝ պրապորշչիկ Ստ. Թոփչյան[54]*:*

Այսպիսով, 1917 թ. նոյեմբերի 21–25-ը Երևանում աշխատեց Հայ զինվորական համառուսաստանյան առաջին համագումարը: Այն իր վերաբերմունքը և գնահատականը հայտնեց անդրկովկասյան նորաստեղծ կառավարությանը, իր մոտեցումներն առաջադրեց զինադադարի, ռազմաճակատի պաշտպանության հարցերում և որպես այդ գերակա խնդիրների իրականացման երաշխիք ու միջոց գործնականորեն քննարկվեց հայկական զինուժի՝ Հայկական բանակային կորպուսի կայացման հիմնահարցը:

«Բոլորը լիահույս են, որ այս ճգնաժամային վայրկյաններին մեր ռեալ ուժը կլինի իսկական և անզուգական պաշտպան հայ ժողովրդի կենսական շահերի»,– ամփոփում էր համագումարը[55]*:*

***

«Այս ահավոր փորձանքեն դուրս գալու համար երկու ճանապարհ ունինք մեր առաջ– կամ ցուցանելով կրավորական վերաբերմունք թողունք, որ դեպքերը գահավիժեն իրենց ընթացքով, և կամ ներգործոն դեր վերցնելով, մեր ճակատագիրը մեր ցանկացածին պես տնօրինե՛նք»[56]*:*

Ընտրության սեփական, հետևողական դիրքորոշմամբ հանդես եկան Երևանի ազգային-դեմոկրատական կազմակերպությունները և նահանգի գաղափարական կոչնակ «Աշխատանք» թերթը: «Ի՞նչ պետք է ընել» հոդվածաշարով, իր երեք համարներում «Աշխատանքի» խմբագրականները բարձրաձայնում էին քաղաքական իրավիճակի ամենատուր հարցադրումները, մասնավորապես, ռազմաճակատի պաշտպանության, Հայկական հարցի և ընդհանրապես, հայության ապագայի խնդիրները: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 1917 թ. հոկտեմբերի 21-ից (մինչև 1918 թ. ապրիլի 14-ը) «Աշխատանքի» խմբագիրը Արամ Մանուկյանն էր, կարելի է եզրակացնել նաև, որ ծրագրային վերլուծությունների և «երկընտրանքին» վերջ դնող գործիչը Արամն էր: «Անպատճառ մարգարե ըլլալու պետք չըկա, գուշակելու համար դեպքերու ընթացքը՝ մոտիկ ապագային»[57]*,– գրում էր «Աշխատանքը» դեկտեմբերի 16-ին (29),– նկատի ունենալով, որ զինադադարի ժամկետի ավարտից հետո Թուրքիան «ամենահասարակ անհամաձայնության կետը պատրվակ բռնելով» պետք է վերսկսեր պատերազմը և բնաջնջեր նաև կովկասահայությանը: Արդիական է հնչում հատկապես Արամի քաղաքական կանխատեսումը և ժամանակի թելադրած գլխավոր մարտահրավերը, որտեղ համազգային երկընտրանքը անվերապահորեն վերածվում էր բռունցքված կամքի և պայքարի գիտակցության: «Թուրք դիվանագետները շատ խորունկ պատճառներ ունին այդպես վարվելու,– կովկասահայության կոտորածները*

[54] *Տե՛ս «Մարտիկ» (Ալեքսանդրապոլ), 14. I. 1918:*
[55] *«Զանգ», 28. XI. 1917:*
[56] *«Աշխատանք», 13. XII. 1917:*
[57] *«Աշխատանք», 16. XII. 1917:*

կանխազգալով գրում էր թերթը,– որովհետև եթե հայությունը կենդանի մնա աշխարհի երեսին, եթե այս անգամ ևս հաջողին հրով և սրով լռեցնելու Հայոց հարցը, եթե համաշխարհային հաշվեհարդարի ատենն ալ նույնիսկ մեր դատը անհետևանք մնա, դարձյալ օր մը, վերստին պիտի ցցվի անիկա մարդկության խղճին առջև, եթե սակայն հայությունը գեթ իր այժմյան քանակը կրցավ պահել: Եվ հետո՝ Կովկասի մեջ պանթուրքական քաղաքականությունը խանգարող տարր մը եթե կա, ատիկա հայն է. ուրեմն ինչու չօգտվիլ դարերու պատմության մեջ հազվադեպ այս առիթեն և Կովկասն ալ արյուններով Թուրքահայաստանի պես՝ մահմեդական միապաղաղ ծովի մը չը վերածել»[58]: Տարակուսանք չկար նաև այն հարցում, որ եթե «թուրքը չը կամենա կովկաս ոտք դնել», միևնույն է անդարձ կորստի էր մատնվում գլխավորը՝ Արևմտյան Հայաստանը: Եվ վերջապես, արվում էր հիմնական եզրակացությունը, որ չի կարելի ժամանակ տալ թշնամուն, որ հայ զինվորը պետք է անմիջապես փոխարինի ռուս դասալիք զինվորին և որ «մեր հուժկու դիմադրությամբ պիտի ազատենք մեր հայրենիքը, պիտի ապահովենք մեր անկախությունը և պիտի փրկենք Կովկասը»[59]: «Ազգային բոլոր ուժերը պետք է համախմբվին և պետք զոհաբերվին մեր դատին»,– այս էր Արամի, «Աշխատանք» թերթի և նրա շուրջը համախմբված ռազմական ու քաղաքական գործիչների կոչը, որը գործնականում կատարեց ազգային գլխավոր առաքելությունը:

Ազգային հավաքական ուժի, 1917–1918 թթ. բախտորոշ քաղաքական փուլի կենտրոն Երևանը այդպիսին դառնում էր դեռ 1917 թ. ամռանից, երբ սկսեց գործել Ժամանակավոր կառավարության կողմից բանակի ազգայնացման մասին որոշումը: Առանցքային էր նաև այն հանգամանքը, որ Երևանի նահանգում էին կենտրոնացել արևմտահայ ռազմական ու քաղաքական գործիչները, 1917 թ. մայիսին Երևանում հրավիրված Արևմտահայ առաջին համագումարում էր ձևավորվել՝ 1912 թ. ստեղծված ազգային պատվիրակությանը հաջորդած ազգային կառույցը՝ Արևմտահայ ազգային խորհուրդը:

Ապագա ազգային մարմինների ձևավորման գործընթացը Երևանում, Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի և ընդամենը մի քանի գործիչների տեղաշարժերի ու Երևան գործուղվելու հետևանք են, ինչը, իհարկե, նպատակային ու հետևողական բովանդակություն ուներ: Սկզբնական շրջանում այդ եզակի գործիչների թվում կարելի է հիշատակել Արամ Մանուկյանին, Սահակ Թորոսյանին Արշալույս Աստվածատրյանին Մկրտիչ Մուսինյանին, Արշավիր Շախաթունուն, ինչոր չափով նաև Հովսեփ Բեկզադյանին և Դրաստամատ Կանայանին: Եղած ոչ հարուստ պատմական նյութի հիման վրա փորձենք վերստեղծել այդ կարևորագույն փուլի համապատկերը:

1917 թ. մայիսին Թիֆլիսից Երևան ժամանեցին Ա. Մանուկյանը և բժիշկ Հ. Բեկզադյանը (ս.-դ.)[60]: Նրանց առաջնահերթ խնդիրը Երևանի նահանգում դասալքության դեմ պայքարն էր և ազգային զորամասերի կազմակերպումը:

---

[58] *Նույն տեղում:*

[59] *«Աշխատանք», 20. XII. 1917:*

[60] *Տե՛ս Ե. Ս ա ր գ ս յ ա ն. Երևանը 1917 թվականին.– «Հայրենիք», 1950, թիվ 9, սեպտեմբեր, էջ 92:*

Նրանք աջակցություն էին ստանում և համագործակցում նախ և առաջ Երևանի զինվորական խորհրդի գործադիր կոմիտեի, մասնավորապես, վերջինիս անդամ Ար. Աստվածատրյանի (ՀՀԴ) կողմից[61]: Արդյունքում ձևավորվեց զինվորական մարմին՝ Հովակիմ Մելիքյանի (ՀԺԿ) նախագահությամբ: Վերջինս սերտ հարաբերությունների մեջ էր ՀՀԴ կենտրոնական կոմիտեի հետ: Ավելի ուշ այն գործում էր Երևանի ազգային խորհրդի հետ համատեղ և լիիրավ կերպով ներկայացնում էր Երևանի նահանգի զինվորական կառույցների միջուկը և ղեկավար մարմինը: 1917 թ. ամռանը ՀՀԴ կենտրոնական կոմիտեի ընտրություններից հետո, կուսակցությունն ավելի նպատակասլաց կերպով ձեռնամուխ եղավ կուսակցական օղակների ակտիվացման ճանապարհով նաև Երևանի նահանգի ազգային կյանքի աշխուժացման ու կազմակերպման գործին: Ձևավորվեցին գավառական և գյուղական կոմիտեներ: Երևան քաղաքը բաժանվեց յոթ թաղերի, ընտրվեցին թաղային կոմիտեներ, որոնց ներկայացուցիչների ժողովում ձևավորվեց ՀՀԴ քաղաքային կոմիտեն: Կենտրոնական կոմիտեի ոգի և ընթացք տվողը Ա. Մանուկյանն էր, որը՝ որպես կուսակցության բյուրոյի անդամ, ակտիվորեն մասնակցում էր ԿԿ-ի նիստերին[62]:

Արշ. Աստվածատրյանի վկայությամբ, Արամը 1917 թ. ամռանը ինչ-որ պաշտոնավարությամբ գտնվում էր Սարդարապատի Ղուրդուղուլի (Արշալույս) գյուղում: Նրա միջոցով լծկաններ և երկաթագործական գործիքներ էին ուղարկվում Արևմտյան Հայաստան՝ վերաշինության գործին: Իր պաշտոնին նա վերաբերվում էր հեգնանքով և իրեն «գոմեշների վերակացու» էր անվանում: Արամը Ղուրդուղուլիում տեսակցում էր նաև Մոսկվայի հայոց կոմիտեի ավագ բժշկուհի օր. Կատարինե Զալյանին, որի հետ երկու ամիս հետո ամուսնացավ: Այնուհետև Արամը Թիֆլիսից ետ է կանչվում և Երևան է վերադառնում միայն դեկտեմբեր ամսին[63]:

Երևանի նահանգի ազգային կոմիտեն կամ այլ կերպ Երևանի Հայոց ազգային խորհուրդը նահանգի կենտրոնական ազգային մարմինն էր: Եթե Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը Փետրվարյան հեղափոխության, ապա Երևանինը՝ Հոկտեմբերյան հեղաշրջման անմիջական հետևանքն էր: Այն կազմավորվել էր 1917 թ. նոյեմբերի վերջին: Սկզբում այն ղեկավարում էր թեմական առաջնորդ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը, նիստերը գումարվում էին առաջնորդարանի դահլիճում[64]:

«Զանգ» թերթի վկայությամբ[65], դեկտեմբերի սկզբին, երբ Երևանի ազգային խորհրդի կազմակերպական կառուցվածքի հիմքում դրվեց Թիֆլիսի կենտրոնական խորհրդի ընտրության սկզբունքը՝ կուսակցական ներկայացուցչությունը, այստեղ ևս ձևավորվեց 12 հոգուց բաղկացած ազգային մարմինը: ՀՀԴ զբաղեց-

---

[61] *Տե՛ս Ա. Աստվածատրյան. Արամը.– «Վեմ» (Փարիզ), 1934, թիվ Ը, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 25:*

[62] *Տե՛ս Ե. Սարգսյան. նշվ. հոդվ., էջ 94:*

[63] *Տե՛ս «Դրոշակ» (Փարիզ), 1927, հոկտեմբեր, թիվ 10:*

[64] *Տե՛ս «Զանգ», 3. XII. 1917:*

[65] *Երևանի ՀՀԴ օրգան «Զանգ» թերթի վերջին համարը լույս տեսավ 1917 թ. դեկտեմբերի 12-ին: «Զանգի» խմբագրատունը գտնվում էր Միլիոննայա 1 հասցեում:*

նում էր 6 տեղ, սոցիալիստ - հեղափոխականներն ու սոցիալիստ - դեմոկրատները՝ 2-ական, 3-ը՝ անկուսակցական էին և 1-ը ներկայացնում էր Հայ զինվորական միությունը: Դաշնակցությունից ընտրվել էին Վահան Փափազյանը, Թադևոս Տոշյանցը, Սահակ Թորոսյանը, Արամ Աղաջանյանը, Եփրեմ Սարգսյանը [66], Արշալույս Աստվածատրյանը[67]: Պատմաբան, հասարակական գործիչ ԱԴոն 15 հոգուց բաղկացած կազմ է ներկայացնում: Էական տարբերությունը կայանում է նրանում, որ Ազգային խորհրդի կազմում ընդգրկված էր նաև ՀԺԿ-ը՝ ի դեմս Հով. Մելիքյանի և Գ. Տեր-Խաչատրյանի: Փափազյանի փոխարեն նշվում է Թ. Նիկողոսյանը, հայ էսէռներին ներկայացնում էին Դ. Զուբյանը և Գ. Տեր-Հակոբյանը, ս.-դ. կուսակցությունը՝ մենշևիկ Գ. Կարապետյանը և բոլշևիկ Պ. Մակինցյանը, անկուսակցականներն էին՝ Խ. եպ. Մուրադբեկյանը, Մ. Մուսինյանը և Հ. Տեր-Մարտիրոսյանը:

Ա-Դո-ի աշխատությունն այն բացառիկ սկզբնաղբյուրներից է, որը ներկայացնում է նաև Ալեքսանդրապոլի և Կարսի ազգային խորհուրդների կազմերը: Ալեքսանդրապոլի ազգային մարմնի կազմում էին Հ. Տեր-Հակոբյանը, բժ. Տերտերյանը, Ալ. Խատիսյանը, Ա. Մամիկոնյանը (ՀՀԴ), բժ. Սարյանը (էսէռ), Ն. Բարսամյանը (ս.-դ.), և Սարգսյանը (անկախ սոցիալիստ), բժ. Տեր-Իսահակյանը (ս.-դ. Հնչակյան): Կարսի ազգային խորհուրդը բաղկացած էր 21 անձերից, նախագահում էր Գ. Զամոյանը[68]:

Ի դեպ, նորահայտ արխիվային նյութերից պարզվում է, որ Թիֆլիսի հայոց ազգային խորհրդին կից, նոյեմբերի վերջին ձևավորվում է Հատուկ կոմիտե, որի մասնաճյուղի ստեղծման գործը Երևանում հանձնարարվում է Արամին:

Արտակարգ լիազորություններով օժտված այդ կառույցին անդամակցում էին Խաչատուր Կարճիկյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Սարգիս Արարատյանը, Հովսեփ Բեկզադյանը, Վարոս Բաբայանը, Իսահակ Ամիրյանը, Գևորգ Տեր-Օհանյանը: Դեկտեմբերի 6-ին (19) Խ. Կարճիկյանն ընտրվում է Հատուկ կոմիտեի ժամանակավոր նախագահ: Այս մասին են վկայում նաև Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանի և քարտուղար Ն. Աղբալյանի ստորագրություններով և կնիքներով հաստատված բնօրինակ վկայականները, օրինակ՝ Հ. Բեկզադյանի (դեկտեմբերի 6 (19), Ռ. Տեր-Մինասյանի, Ա. Մանուկյանի՝ (դեկտեմբերի 10 (23)) Հատուկ կոմիտեին անդամակցելու վերաբերյալ[69]:

Դեկտեմբերին կայացած նիստերը որոշակի լույս են սփռում կոմիտեի աշխատանքային ուղղությունների վրա: Դեկտեմբերի 1-ին (14) որոշվում է Հատուկ կոմիտեի ներսում աշխատանքները բաժանել հետևյալ կերպ. Խ. Կարճիկյանին հանձնարարվում է կառավարական հաստատությունների (Կոմիսարիատի) հետ կապ հաստատելու, Ա. Մանուկյանին և Գ. Տեր-Օհանյանին՝ Հայ զինվորական միության, դասալիքների հավաքման և զինակոչի խնդիրների, Ռ. Տեր-Մինասյանին և Հ. Բեկզադյանին՝ Հայկական կորպուսի դիվիզիայի կազմակերպ-

---

[66] *«Հայրենիք» ամսագրում (1950, թիվ 9)՝ «Երևանը 1917 թվականին» հոդվածի հեղինակը:*

[67] *Տե՛ս «Զանգ», 3. XII. 1917:*

[68] *Տե՛ս Ա-Դո, Հայության երկունքը.– ՀՀ պատմության թանգարան, նոր պատմության բաժին, թղթ. 839/195դ, ձեռագիր, էջ 138:*

[69] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24 (1 մաս), թթ. 29, 33, 35-36, 37:*

ման, Վ. Բաբայանին՝ գրավոր և բանավոր պրոպագանդայի, իսկ Ս. Արարատյանին՝ Կովկասում ազգային միլիցիայի կազմակերպման, ինչպես նաև Հատուկ կոմիտեի դիվանի ու հաշվապահության գործավարությունը[70]: Դեկտեմբերի 2-ի (15) նիստում որոշվում է դասալիքների հավաքման և զորակոչի կազմակերպման նպատակով Երևան գործուղել Ա. Մանուկյանին և ՀՋՄ միջոցներից նրանց տրամադրել 200 հազ. ռուբլի[71]:

Երևանի ազգային խորհրդի առջև ծառացած խնդիրները բազմաթիվ էին ու բազմաբնույթ: Բոլշևիկյան հեղաշրջումից հետո, հատկապես, «ժողովուրդը թեքվում էր դեպի հարազատ հաստատությունները - դեպի Ազգային խորհուրդները»: Թե՛ կենտրոնում և թե՛ գավառներում երկրի տերերը դառնում էին ազգային խորհուրդները: Արշ. Աստվածատրյանի վկայությամբ Երևանի ազգային խորհուրդը թեև իրեն համարում էր նահանգի գերագույն ազգային մարմինը, բայց «իր անելիքների մասին որոշ, հստակ գաղափար չուներ»[72]: Խորապես զգալով ստեղծված ռազմաքաղաքական տագնապալի և բախտորոշ իրավիճակը, միևնույն է ազգային խորհուրդը սկզբում համապատասխան գործունեություն չէր վարում: «Կային մարդիկ, կար գործ կատարելու տրամադրություն, բայց չկար մի կամք, որ օղակեր այդ մարդկանց ու մղում տար նրանց ձգտումներին»,– գրում էր Արշ. Աստվածատրյանը իր «Արամը» հուշապատումի մեջ: Վճռական դեր էր կատարում նաև այն հանգամանքը, որ Երևանի ազգային, հասարակական-քաղաքական գործիչների հայացքը գլխավորապես ուղղված էր Թիֆլիսին, Կոմիսարիատին, այնտեղից էր սպասում հայկական կյանքը կազմակերպելու հրահանգները: Երբեմն Թիֆլիսից Երևան էին ժամանում պատահական մարդիկ, որոնց տեղեկությունները, էլ չենք ասում քաղաքական մարտավարության մշակումը, անբավարար էին ու չէին համապատասխանում նահանգի իրական զարգացումներին: Դրանք չէին կարող նախանշել Երևանի ազգային խորհրդի անելիքների ուղին:

Քաղաքական անկայուն դրությունը, Կովկասյան ռազմաճակատի կազմալուծումը և Արևմտյան Հայաստանի ճակատագիրը, թիկունքի թուրք-թաթարական, քրդական խռովությունները հայ ժողովրդի համար ստեղծել էին բացառիկ վտանգավոր կացություն: Տագնապալի էր նաև Երևանի նահանգի վիճակը: «Երևան քաղաքի պատերի տակից սկսած,– գրում էր ազգային խորհրդի անդամ Եփրեմ Սարգսյանը,– մինչև Բասարգեչար (Վարդենիս – Վ. Մ.) ու Զանգեզուր, Նախիջևան ու Գողթան, Շարուր- Դարալագյազ ու Իգդիր ու Կողբ, Աղբաբա ու Շամշադին ամեն, ամեն տեղ հայ ժողովուրդը ենթակա էր վտանգի»[73]:

Երևանում հասունանում էր գաղափարական և մարտավարական վայրիվերումներին, անորոշությանը նպատակամղված ընթացք տվող գործչի պահանջը:

Ազգային խորհուրդը Դրոյից տեղեկանում է, որ շուտով Թիֆլիսից գործուղվելու է այդպիսի հեղինակություն: Այսպիսով՝ 1917 թ. դեկտեմբերի վերջին Թիֆլիսի Հայոց ազգային, Արևմտահայ ապահովության և Հայ զինվորական խորհուրդ-

---

[70] *Տե՛ս նույն տեղում, թ. 29:*
[71] *Տե՛ս նույն տեղում, թ. 31:*
[72] *Տե՛ս Ա. Ա ս տ վ ա ծ ա տ ր յ ա ն. նշվ. հոդվ., էջ 27-28:*
[73] *Ե. Ս ա ր գ ս յ ա ն, նշվ. հոդվ., էջ 95:*

ների հատուկ լիազոր-ներկայացուցչի կարգավիճակով կրկին Երևան է վերադառնում Ա. Մանուկյանը: Ժամանման օրն իսկ Գայանյան դպրոցում, որտեղ հավաքվել էր Երևանի ազգային խորհուրդը, Արամը հանդես եկավ զեկուցմամբ՝ նվիրված Ռուսաստանի և Անդրկովկասի քաղաքական զարգացումներին, հայ-վրացական թաթարական հարաբերություններին, Թուրքիայի մոտակա մտադրություններին և դրանցից բխող գործողությունների մշակմանը[74]:

Անդրկովկասյան նոր իշխանության կազմակերպումից մեկ ամիս անց Արամի մոտ բյուրեղացել և համապարփակ կերպով ձևավորվել էր հստակ դիրքորոշում՝ երկրամասային միացյալ իշխանության և նրանում արմատավորվող վրաց-թաթարական հակահայկական դաշինքի հարցում: «Եթե ընդհանուր ուժերով ճակատ պահելու խոսք էլ լինում է – դա լոկ խոսք է՝ զուրկ իրական հիմքից ու անկեղծությունից: Հայերով ո՛չ ոք չի հետաքրքրվում, շոշափելի օգնություն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կա դավադրական վերաբերմունք: Մինակ ենք և պետք է ապավինենք միա՛յն մեր ուժերին՝ թե ճակատը պաշտպանելու և թե երկրի ներսը կարգ հաստատելու համար»,– փաստում էր Արամը[75]:

Երևանի Ազգային խորհուրդը հավանության է արժանացնում Արամի զեկուցումը, նրա առաջարկները, մոտակա գործողությունների ծրագիրը: Ա. Մանուկյանը այս հավաքում առաջարկում է ձևավորել նաև մի փոքրաթիվ և գործուն մարմին՝ Հատուկ կոմիտե, որին ժամանակավորապես պետք է տրվեին Երևանի ազգային խորհրդի լիազորությունները: Սակայն երբ դրվեց այդ մարմնի կազմավորման հարցը, բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները հրաժարվեցին մաս կազմել այդ կառույցին: Մերժվեց նաև այն առաջարկը, որ Հատուկ կոմիտեն հանդես գա որպես ազգային խորհրդի կուսակցական ներկայացուցչությունը պահպանող, բայց կրճատված մարմին: Արշ. Աստվածատրյանի վկայությամբ «ամենքը համամիտ էին Արամի պարզած գործելակերպին, բայց գործնական պատասխանատվություն վախենում էին ստանձնել: Եվ գործը, ինչպես ամեն տեղ, Երևանում էլ մնաց դաշնակցականների ձեռքը»[76]: Հատուկ կոմիտեի կորիզը կազմում էին Արամը, իբրև Թիֆլիսի ազգային խորհրդի անդամ-լիազոր, Երևանի ազգային խորհրդի կողմից՝ Մ. Մուսինյանը և Արշ. Աստվածատրյանը, ինչպես նաև նահանգային կոմիսար Ս. Թորոսյանը[77]: Հով. Մելիքյանը, Դալի Ղազարը և Բ. Թառումյանը ներկայացնում էին Հայ զինվորական խորհուրդը: Նոր ազգային մարմինը ստացավ «Երևանի Հայոց ազգային և զինվորական խորհուրդների հատուկ կոմիտե» անվանումը: Հատուկ կոմիտեի նախագահ ընտրվեց Մ. Մուսինյանը[78]:

Հատուկ կոմիտեն դարձավ Երևանի նահանգի փաստական իշխանությունը, Արամ Մանուկյանը՝ այդ ոչ պաշտոնական ազգային իշխանության ղեկավարը: Անդրկովկասյան կոմիսարիատի հետ հարաբերությունները և փոխառնչությունները սահմանափակվում էին առայժմ միայն ռազմաճակատի պաշտպա-

---

[74] *Տե՛ս Ա. Աստվածատրյան. նշվ. հոդվ., էջ 28:*
[75] *Տե՛ս նույն տեղում, էջ 28-29:*
[76] *Տե՛ս նույն տեղում, էջ 30:*
[77] *Տե՛ս Ե. Սարգսյան. նշվ. հոդվ., էջ 28:*
[78] *Տե՛ս Ա. Ասրյան. Արամ Մանուկյան, Երևան, 2009, էջ 164:*

նության բազմաբնույթ հիմնահարցերի համատեքստում, մասնավորապես, զորակոչի հարցում: Արամի Երևան վերադառնալու հենց հաջորդ օրից էլ, դեկտեմբերի 19–20-ին Հատուկ կոմիտեն սկսեց գործել: Հնակերպվեցին գլխավոր առաջնահերթությունները՝ զորակոչի միջոցով աջակցություն ռազմաճակատին, Երևանի նահանգի հայության ինքնապաշտպանության կազմակերպում և թուրք-թաթարական, քրդական խռովությունների սաստում, անիշխանության վերացում, գավառներում կարգի և օրինականության հաստատում, հաղորդակցության ուղիների կարգավորում, պարենային հարցի լուծում և այլն[79]: Հատուկ կոմիտեի շուրջը սկզբից ևեթ ստեղծվել էր առողջ և գործնական մթնոլորտ, որտեղ ամենօրյա տենդային աշխատանք էր իրականացվում՝ համերաշխությամբ և ղեկավարության պարագայում առանց նյութական վարձատրության: Այդ մթնոլորտը ստեղծվել էր Արամի ներկայությամբ: Եթե Հատուկ կոմիտեի անդամները ինչ-որ պաշտոնով կապված էին որևէ հիմնարկության հետ և աշխատավարձ էին ստանում, ապա Արամը որևէ դրամական եկամտի աղբյուր չուներ, ապրում էր զրկանքներով, կիսաքաղց: Արշ. Աստվածատրյանին նա պատասխանում էր, թե «Թիֆլիսում, կարծեմ, մի բան նշանակել են, կուղարկեն: Դատարկ բաներով մի մտահոգիր»[80]:

Հատուկ կոմիտեի ստեղծմամբ, փաստորեն, Երևանի ազգային խորհուրդը դադարեցրեց իր գոյությունը: Ընտրվում է մի հաշվիչ հանձնաժողով (հաշվեհարդար մարմին), որը պետք է ամփոփեր և փակեր Ազգային խորհրդի և նրա գործադիր մարմինների բոլոր հաշիվները: Այդ մարմինը կազմում էին Հովհ. Մելիքյանը, Մ. Մուսինյանը և Արշ. Աստվածատրյանը:

Հատուկ կոմիտեի գործունեության կարևորագույն բնագավառներից էր ֆինանսական ոլորտը՝ հայության կողմից հանգանակության կազմակերպումը: Ազգային տուրքը գանձելու էր Թիֆլիսում, որի համար արտերկրից հրավիրել էին անվանի հայ ձեռնարկատեր-մեծահարուստները: Այդ թվում էին Տ. Աֆրիկյանը, Խ. Աֆրիկյանը, Մ. Քալանթարյանը, Հ. Մեյլանյանը, Մ. Արամյանցը, Ա. Բաղդասարյանը, Մ. Դոլուխանյանը, Ա. Էնֆիաջյանը, Ա. Զարգարյանը, Ա. Մելիք-Ազարյանը, Ս. Գյուլպենկյանը, Խալաթյանը, Ա. Միլեյանը, Ավան-Յուզբաշյանը: Հանգանակության գործընթացը սկզբում դրվեց կամավոր դրամահավաքտուրքի ձևի մեջ և որոշվեց նույնիսկ հանգանակությունն իրականացնել հետևյալ քաղաքներից՝ Թիֆլիս (2 մլն ռուբլի), Բաքու (3 մլն), Արմավիր (500 հազ.), Եկատերինոդար (500 հազ.), Վլադիկավկազ (50 հազ.), Նոր-Նախիջևան (200 հազ.), Մայկոպ (50 հազ.), Մոսկվա (1 մլն), Պետրոգրադ (1 մլն), Երևան (200 հազ.), Կարս (50 հազ.), Ալեքսանդրապոլ (50 հազ.), Գանձակ (25 հազ.), Անդրկասպյան երկիր (300 հազ.): Ընդհանուր գումարը հասավ 10 մլն ռուբլու: Շուտով անհրաժեշտ համարվեց նախ՝ տուրքը դարձնել պարտադիր, այն կոչել ազգային տուրք, ապա և՝ վերջինիս գումարը հասցնել 30 միլիոնի, ավելացնելով յուրաքանչյուր քաղաքի և շրջանի տուրքը՝ նրա նյութական կարողությանը համապա-

[79] *Տե՛ս Արամը, Երևան, 1991, էջ 91:*

[80] *Տե՛ս Արամը.– «Հայրենիք», 1951, թիվ 2, էջ 30:*

տասխան: Օրինակ՝ Թիֆլիսի հանգանակիչ մարմինը որոշեց պահանջված 3 միլիոն գումարի փոխարեն գանձել 4 միլիոն ռուբլի[81]:

Մարմինն ուներ խոշոր գումար, և Արամ Մանուկյանը հաճախ, տարբեր հիմնավորումներով նյութապես աջակցում էր կարիքավոր մարդկանց, ովքեր «ամեն ինչ կորցնելով պահել էին իրենց պարտաճանաչության զգացմունքները հանդեպ հայրենիքին»: Անհրաժեշտության դեպքում նա արհամարհում էր կարգն ու օրենքը և անում էր այն, ինչ որ նպատակահարմար էր համարում: «Տարերային ուժ էր,– գրում էր կադետ, ՀՀ առաջին կառավարության արդարադատության նախարար Գ. Պետրոսյանը,– որ ոտնահարում, անցնում էր ամեն մի օրենք՝ միշտ աչքի առաջ ունենալով մարդկային շահերը»[82]:

Ամփոփելով Երևանի Հատուկ կոմիտեի ձևավորման փուլը՝ կարելի է եզրակացնել, որ այն թելադրված էր բոլշևիկյան հեղաշրջմամբ Անդրկովկ ասում ստեղծված ռազմաքաղաքական արտակարգ իրավիճակով: Քաղաքական նոր իրադրությանն առաջինն արձագանքում է Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որին կից ստեղծված Հատուկ կոմիտեի կառուցվածքի և նպատակների նմանությամբ, ինչպես նաև Երևանի նահանգում տիրող տագնապալի կացության թելադրմամբ տեղում կազմակերպվում է ևս մի Հատուկ կոմիտե: Թեպետ այն Արամի կողմից ուներ հարաբերական ինքնուրույնություն, սակայն առանցքային հիմնահարցերի վերաբերյալ որոշումները, միևնույն է, ստանում էր Թիֆլիսից: Այս մարտավարության դեմ հետևողականորեն արտահայտվում էր «Աշխատանք» թերթը: Արշ. Աստվածատրյանն այդ երևույթը որակում էր անգամ «Արամի և Հատուկ կոմիտեի դժբախտություն»-ը, առանձնացնելով այն հանգամանքը, որ վերջիններս անկախ և ազատ չէին իրենց որոշումներում և գործողություններում: «Արամը գլխավորում էր Հատուկ կոմիտեն իբր Թիֆլիսի ներկայացուցիչ. նա պետական մարդ էր և իր գործերի մեջ պատասխանատու կեղրոնական իշխանության առջև,– մի հանգամանք, որ նրան կաշկանդում էր՝ հարկադրելով լինել վերին աստիճանի շրջահայաց, փափկանկատ՝ անգամ այնտեղ, որտեղ մի հարվածով կարող էր լուծել կնճիռը»[83]: Մինչ այս հիմնահարցին անդրադառնալը, համառոտ լուսաբանենք Երևանի նահանգում և երկրամասի հայկական շրջաններում՝ Բաքվում, Թիֆլիսում ընթացող հասարակական-քաղաքական կյանքի դրվագները:

Քաղաքական բուռն զարգացումներին զուգահեռ, 1917 թ. հոկտեմբեր-1918 թ. հունվար ամիսներին Երևանի նահանգում Երևան քաղաքում և երկրամասի հայաշատ վայրերում Փետրվարյան հեղափոխության իներցիայով շարունակվում էին ժողովրդավարական գործընթացները, ընթանում էր հասարակական ակտիվ կյանք: Այն իր մեջ ընդգրկում էր թե՛ նահանգային կառույցները և թե՛ կուսակցությունների գործունեության ոլորտը, թեև ոչ բավարար չափով էր համակարգված ու նպատակային:

---

[81] *Տե՛ս Ա-Դո, նշվ. աշխ., էջ 184-185:*

[82] *Նույն տեղում, էջ 33:*

[83] *Արամը.– «Հայրենիք», 1951, թիվ 2, էջ 33:*

Հոկտեմբերի 29-ին (նոյեմբերի 10) ՀՀԴ Երևանի Կենտրոնական կոմիտեի գրասենյակում հրավիրվում է կուսակցության Արևելյան բյուրոյի, կենտրոնական և տեղական կոմիտեների միացյալ նիստ, որը, հիմնականում, քննարկում է քաղաքական իրավիճակի հարցերը, Սահմանադիր ժողովի հրավիրման խնդիրը[84]: Նոյեմբերի սկզբին Երևանի ՀՀԴ աշակերտական միության վարչությունն ազդարարում էր բոլոր շրջանների հայկական աշակերտական ՀՀԴ միություններին, որ հունվարին հրավիրվելու է Աշակերտական միությունների համագումար[85]: Նոյեմբերի 8-ին (20) Վաղարշապատի գավառական կոմիսարիատում կայանում է Էջմիածնի վերակազմյալ գավառական գործադիր կոմիտեի անդրանիկ նիստը՝ լիազոր Ս. Թորոսյանի նախագահությամբ: 47 անդամներից 37-ը հայեր էին, 10-ը՝ թաթարներ, 35-ը՝ ՀՀԴ անդամներ էին, մեկը՝ էսէռ, մեկը՝ անկուսակցական: Կոմիսար է ընտրվում Գ. Ալթունյանը, տեղակալ՝ Ալլայար Սուլթանովը[86]: Հաջորդ օրը Իգդիրում գործադիր կոմիտեի նախագահ է ընտրվում Ենոք Օրդույանը[87]:

Այսպիսով՝ բոլշևիկյան հեղաշրջման հետևանքով և Անդրկովկասյան կոմիսարիատի որդեգրած՝ Ռուսաստանից անջատ գործելու քաղաքականության համատեքստում պարզ դարձավ, որ Անդրկովկասի ազգերն այսուհետև պետք է զբաղվեն «սեփական հայրենիքների» որոնման հարցերով: Թիֆլիսի կենտրոնական Հայոց ազգային խորհուրդը, աստիճանաբար համոզվելով այն հարցում, որ Կոմիսարիատի քաղաքական ղեկավարությունը՝ ի դեմս վրացական մենշևիկների, այլևս թույլ չի տա հայկական քաղաքական վերնախավի գերիշխանությունը Թիֆլիսում, հարկադրված հայացքն ուղղում է Երևան:

Երևանն ու Երևանի նահանգը սկսում են ընկալվել որպես հայության համախմբման, հայկական հասարակական-քաղաքական, ռազմական կյանքի կենտրոն: Այստեղից էր հնարավոր ղեկավարել Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատի պաշտպանությունը, այստեղ էր հնարավոր կազմակերպել ազգային զինական ուժը:

Համազգային կենսական խնդիրների լուծման նպատակով Հայոց ազգային խորհուրդը Երևան է գործուղում Արամ Մանուկյանին, որն էլ իր համախոհների ջանքերով կյանքի է կոչում նախ Երևանի ազգային խորհուրդը, ապա և հիմնում է Հատուկ կոմիտեն: Այդ ազգային կառույցները նահանգային և քաղաքային ժողովրդավարական հիմնարկների հետ համատեղ սկիզբ են դնում տնական ու նպատակային գործունեության, որի գլխավոր նպատակը նախևառաջ Երևանի նահանգի հայ բնակչության անվտանգության ապահովումն էր, մահմեդական-թաթարական, քրդական խռովությունների սաստումը, տարաբնույթ անարխիայի հաղթահարումը և, իհարկե, սպասվող թուրքական արշավանքին դիմագրավելու խնդիրները:

---

[84] *Տե՛ս «Հորիզոն», 29. X. 1917:*
[85] *Տե՛ս «Հորիզոն», 7. XI. 1917:*
[86] *Տե՛ս «Հորիզոն», 8. XI. 1917:*
[87] *Տե՛ս «Հորիզոն», 9. XI. 1917:*

ЕРЕВАН И ЕРЕВАНСКАЯ ГУБЕРНИЯ ПОСЛЕ ОКТЯБРЬСКОГО ПЕРЕВОРОТА

ВААН МЕЛИКЯН

Р е з ю м е

Параллельно с развивающимися политическими событиями в Закавказье, в условиях турецко-татарских, курдских мятежей, а также по инерции Февральской революции и продиктованными большевистским переворотом проблемами, продолжались демократические процессы в Ереванской губернии и в городе Ереване, велась активная общественная жизнь, делались попытки разрешить насущные социально-экономические проблемы. Гражданская власть в губернии осуществлялась посредством четырех главных структур: исполнительного комитета Ереванской губернии, Думы, совета рабочих и солдатских депутатов и ереванского градоначальника. С ноября 1917 г. по февраль 1918 г. в Ереванской губернии образовались и действовали несколько национальных органов, в том числе: национальный совет Ереванской губернии, Особый комитет, национальный совет западных армян, Армянский воинский совет. Проходивший в Ереване (21–25 ноября 1917 г.) Армянский воинский - съезд завершил процесс образования армянской армии.

YEREVAN AND THE YEREVAN PROVINCE AFTER THE OCTOBER REVOLUTION

VAHAN MELIKYAN

S u m m a r y

Along with political events having been developed in Transcaucasus under the Turk-Tatar and Kurd rebellions as well as resulted by February revolution and Bolshevik overturn democratic processes were going on and an active social life was in process in the Yerevan Province and in the city of Yerevan, and essential social-economic problems were attempted to be solved. The government of the Province was implemented through four major structures of the power: Executive Committee of the Yerevan Province, Parliament, Council of Deputies of Workers and Soldiers and Yerevan City Administrator. Starting from November of 1917 up to February of 1918, several national authorities were established and were acting in the Yerevan Province, including: National Council of the Yerevan Province, Special Committee, National Council of Western Armenians, Armenian Military Council. Armenian Military Congress held in Yerevan (November 21–25, 1917) was a crucial event, as it finalized the formation process of Armenian Army.